

69

- 43 -

ՄԱՃԿԱՆ՝ ԳՐԱԴԱՐԱՆ ...

Ն. Ն. ԲՈՒԴԱՆՈՎ,

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ

Ք Ո Ս Ը



Թարգմանեց Ն. ԲԱԼԱՅԱՆ

Խմբագրւածք
Խ. ՅԵՐԻՅՅԱՆԻ


ՀՐԾ.ՏՐԾ.ԿԶՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. Կ. ԿՈՄԻՏԵՍԻ
Յ Ե Բ Ե Վ ա ճ - 1 9 2 3 թ.

Գ Յ Ո Ւ Ղ Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ս Ե Ր Ի Ա - № 3

Յ Ա Ն Կ

Եջ


1. Քոսի պատճառներն ու տեսակները	6
2. Ջիու քոսը	9
3. Տավարի քոսը	14
4. Մանր կենդանիների քոսը	16
ա) Վոշխարի քոսը	16
բ) Այծի քոսը	19
գ) Ուղղի քոսը	20
դ) Շների և կատուների քոսը	20
յե) Թռչունների քոսը	22
5. Կենդանիների քոսը բժշկելու համարակ միջոցները 24	
(Անասնաբույժ Վեդեթի փորձառությունից)	



ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ

ቶ በ ህ ር

Խմբագրությունը
Խ. ՅԵՐԻՅՅԵՆԻ



1980.05.4201-0301-6 2. 4. 4. 4. 4001-8756

8 k r b q m 6---1 9 2 8 p



1900

1900

1900



236 - 492



Այս գրքույկը տպագրվում է աննշան ուղղումներով
և կրճատումներով. կրճատման յենթարկվել են մոչ եական
տեղերը: Հինգերորդ գլուխը պատկանում անասնաբուժ
վեյեժեին:

Խմբագրություն

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՔՈՍԸ

1. ՔՈՍԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Յերբ կենդանին հիվանդանում է, իսկույն պետք է դիմել անասնաբու-
ժին:

Քոսը անասունների մեջ շուտ-շուտ պատահող կաշվի վարակիչ հիվանդութիւնն է, վորը առաջ է գալիս տիզ կոչվող մանր միջատներից: Դրանք այնքան մանր են, վոր նրանց կարելի չէ տեսնել միայն խոշորացույցով կամ մանրադիտակով:

Տիզերն ունեն չափազանց ամուր կնճիթ, վորով կըր-
ծում կամ ծակում են անասնի կաշին և ծծում նրա մար-
մնի հյութերն ու արյունը: Բացի այդ նրանք մեծ անց-
քեր են բաց անում անասնի կաշվի մեջ ու ապրում այն-
տեղ:

Ըստ պատճառող տիզերի շատ արագ են բազմանում, յեթէ վորեւէ խանգարող բան չկու. մեկ գույց արու յեղ-
եզ տիզերից 3 ամսվա ընթացքում ստացվում է մոտ մեկ
եղ կես միլիոն սերունդ:

Կաշվի մեջ բացված անցքերը շատ հարմար են եզ-
տիզերի համար, ուր նրանք գնում են իրենց ձվերը: Այդ
ձվերից 4 կամ 7 օրից հետո դուրս են գալիս թրթու-
ներ, վորոնք 2-3 շաբթում գառնում են տիզեր:

Անասունների մեջ պատահում են քոս առաջացնող 3
տեսակի տիզեր, այն է՝ ֆորասիզեր, վերնակաշվային տի-
զեր, յեղ կաշվակեր տիզեր, վորոնք և յերեք տարբեր տե-
սակի քոսեր են առաջացնում:

Քորաւիզները առաջացնում են ամենափտանգափոր և դժվար բժշկվող քոսը, վորովհետև նրանք մտնում են կաշվի տակի խորքերը: (Տես նկար 1.)

Քորաւիզները հեշտուրքաւէ անցնում են մարդուն: Վերնակաշվային շիզերը կաշվի խորքը չեն գնում, այլ մնում են յերեսին՝ կաշվի ճաքած և չորացած մասերում կամ նրանց տակը: Վերնակաշվային տիզը, ինչպես նաև քորատիզը, կերակրվում են անասնի մարմնի հյութերով և արյունով: Քանի վոր վերնակաշվային տիզը կաշվի տակ խորը չի մտնում, այդ պատճառով ել նրա առաջացրած քոսը համեմատաբար հեշտ է բժշկվում: (Տես նկ. 2.)

Կաշվակեւիները չեն կարող կաշին ծակել և կաշվի մեջ անցքեր բաց անել ու սնվել արյունով կամ կաշվի փափուկ մասով, այլ սնվում են միայն կաշվի յերեսի կեղեվով և թեփով: Այդ պատճառով սրա առաջացրած քոսը հեշտությամբ է բժշկվում և համարվում է քոսի ամենաթեթև տեսակը: (Տես նկ. 3 և 4.)


Քոս առաջացնող շիզերն ապրում են անասնի միայն մարմնի վրա կամ կաշվի մեջ:

Անասունները քոսով վարակվում են քոսոտ անասուններին քսվելով: Նրանք վարակվում են և այն առարկաներից, չոր գցված են լինում քոսոտ անասունների վրա:

Առողջ անասունները վարակվում են միայն, յերբ նրանց կապում են ֆուոս անասունների կապված տեղիներում կամ յերբ նրանց միասին են տրածացնում:

Հատկապես վտանգափոր են թփերով ծածկված արոտատեղիները, վորովհետև քոսոտ անասունները մարմինը քորելիս թողնում են այդ թփերի վրա տիզերի թրթուռները, վորոնք հեշտությամբ կաշւում են առողջ անասուններին:

Քոսը շատ հեշտ է և շատ տրագ և տարածվում միեւ-




Նկ. 1. արու Բուսից փորի կողմից

կատվից, այծից և խոզից: Վնասարը կարող է վարակվել բորատիզով՝ շներից և այծերից: Շունը վարակվում է մարդու, խոզի, կատվի, այծի և աղվեսի բորատիզով: Խոզը վարակվում է այծի բորատիզով: Ճագարը վարակվում է մարդու բորատիզով:


Բուսի նշանները հետևյալն են. վարակված կաշվի վերա առաջանում են բշտիկներ, վորոնք հետագայում տրաքվում են և նրանց միջից դուրս յեկած հեղուկի շնորհիվ կաշվի մազերն իրար են կպչում: Յեթե քոսը շատ

ևնայն սեռակի անասունների չեջ. որինակ՝ քոսոտ ձիերն ավելի շուտ վարակում են հենց ձիերին, քան մյուս կենդանիներին:

Պես՝ ե ասել, վոր մարդու համար Բուսի բույր սեռակներն ել վարակիչ են: Ձիև վարակում է բորատիզով մարդուն, վոչխարին, շանը, կատվին, խոզին, ուղտին և ճագարին: Խոջը յեղջուրավոր անասուններին բորատիզն անցնում է ձիուց, վոչխարից,



Նկ. 2. վերակաշվային սիգ (արու) փորի կողմից



Նկ. 3. կաշվափեր սիգ (աբու) փորի կողմից


քեր ե ստացվում: Միևնաժամ տեղերի ազդեցությունից անասունները չափազանց լցարում են և նույնիսկ սատկում:

Հիվանդ անասուններին չպետք է մտնել առողջների հետ մի սենյակ: Արածացնելն ու քրեշք պիտի կատարվեն ջով-ջով:

Քոստո անասունների կաշին և բուրդը կարելի է ծախել միայն ախտահանելուց և լավ չորացնելուց հետո:

ե ուժեղ, այդ դեպքում անասնի մարմնի վրա առաջ են գալիս ճաղատ տեղեր (քաշալ, մազերը թափած), փորն քծածկվում են թեփերով, կաշվի կնճիռներով ու ծալքերով: Կաշին պնդանում է ու կոշա կեղև բռնում:

Վարակված անասունները փոր են գալիս, փորն ուժեղանում է մանավանդ սափ ժառանգյել գիշերները: Անասունները քսվում են վարակված տեղերով պինդ առարկաներին այնպես, Վոր կոշտացած կաշին ճաքում է, արնոտվում ու վեր-



Նկ. 4. կաշվափեր սիգ(եգ) փորի կողմից:

2. Զ Ի Ո Ի Ք Ո Ս Ը

Զիւրի վրա պատահում են քոս պատճառող տիգերի յերեք տեսակներ՝ քորատիգեր, վերնակաշվային տիգեր և կաշվակերներ։ Քոսատիգերի ամեն մի տեսակը ձիու կաշվի մեջ բնակվելու համար ընտրում է իրեն սիրելի տեղը։

Քորատիգի քոսը սովորաբար սկսվում է գլխից, վզից, թիակներից, մեջքից և սրունքների զրսի մասից. այդ տեղերից քոսը անցնում է մարմնի մյուս մասերին, այնպես վոր 3—4 շաբաթվա ընթացքում վարակում է ամբողջ կաշին։ (Տես նկ. 5)

Այդ տեսակի քոսից սկզբում կաշվի վրա առաջանում են հանգույցներ, ուռուցքներ, վորոնք հեշտությամբ նկատվում են ձեռքով կաշին շփելիս. այդ հանգույցները հետո դառնում են բշտիկներ, վորոնք և տրաքվում են ու միջից դուրս յեկած թարախի միջոցով կաշվի մազերը իրար են կպչում և քաշելիս հեշտությամբ պոկվում են։ Անխնամ թողնելուց, մարմնի վրա առաջանում են, շատ քորելու շնորհիվ, արնոտ, ճաղատ (քաշալ) տեղեր, ծածկված՝ կաշվի կոշտ կեղևով և ծալքերով։ Յեթե բժշկական միջոցներ ձեռք չեն առնվում, ձին ամբողջապես ծածկվում է խոցերով, կաշին կոշտանում է, իսկ մազերը բոլորովին թափվում են։ Վարակված տեղերը խիստ քոր են գալիս և հիվանդ անասունն ամբողջ ժամանակ կծում է այդ տեղերը, քսում է պինդ առարկաներին, առանձնապես գիշերը, տաք տեղում։ Զիւն միշտ գուր է գալիս, յերբ վարակված տեղերը քորում են։

Հիվանդ անասունները, վորոնց հյուսթը և մարմինը ծծում են միլիոնավոր պարազիտներ, լղարում են և վերջ ի վերջո վատ կերակրելուց և վատ խնամքից՝ չափազանց հյուծվում են և սաակում։

Քորատիգի քոսը ձիու համար ամենավտանգավորն



Fig. 5. founs ap

ե, վորովհետեւ անխնամ թողած դեպքում դժվարությամբ ե բժշկվում: Բացատրվում ե այս, ինչպես արդեն հիշեցինք, նրանով, վոր քորատիզը շատ խոր ե մտնում կաշվի մեջ:

Քոսը բժշկելն այնքան ել հեշտ չե, մանավանդ անխնամ թողնված դեպքերում. այդ պատճառով ձիւ. քոսի ամենաթեթեւ նշաններն երևալուն պես, պետք ե դիմել անասնաբու ժին:

Ձիւ քոսի դեմ գործադրվում են շատ դեղեր, բայց այդ դեղերը լավ են ազդում միայն վերնակաշվային և կաշվակեր քոսերը բժշկելիս, վորովհետեւ սրանց տիզերն ապրում են կաշվի վրա, կամ նրա ամենավերին շերտերում: Իսկ քորատիզային քոսի դեմ կռվելիս, հաճախ գործ են ածում ամենալավ դեղերը, բայց դժվարությամբ ե բժշկվում և յերկար ժամանակ ե խլում, վորովհետեւ քորատիզերն ապրում են կաշվի տակը, ուր դեղերը դժվարությամբ են ներս մտնում: Ինչ ել լինի, քոսի բժշկումը պետք ե կատարվի անասնաբու ժերի ցուցմունքով և հսկողությամբ:

ՎՈՐՆ Ե ՔՈՍԻ ԴԵՂԸ

Քոսի դեմ կռվելու ամենալավ միջոցները համարվում են՝ ձյութը, լիպոլը, կաբոլկան, կրեոլինը, ծծ.ւմբը, (քուքուրթ), կրեազոտը, կիրը և այլն, վորոնցից պատրաստում են միշտ և քսում են կաշվին չոտկով, ծղնոտով և այլն: Յեթե այս դեղերը չճարվեն, կարելի չե ոգտվել նաև սնային միջոցներից, ինչպես որինակ՝ նավթից, յեփած ծխախոտի ջրից, մոխրաջրից և այլն, բայց պետք ե զգուշ գործածել և հարկավոր ե խնամքով քսել վարակված տեղերը: Պիտի գիտենալ, վոր նավթով քսած տեղերի մազերը թափվում են և կաշվի վերին շերտը պղկվում ե. այդ պատճառով, յեթե քոսը կաշվի վրա մեծ տեղ ե բռնում, հարկավոր ե կաշին քսել մաս-մաս:

Դեղերից ամենալավը հետեյալ մշլամներն են.

1. Ձյութի ջրիկ մշլամը: Սա պատրաստվում է այսպէս. վերցնում են մի քառորդ ֆունտ ձյութ և նույնքան ծծմբափոշի ու խառնում. դրան ավելացնում են կես ֆունտ կանաչ սապոն և նույնքան չմաքրած սպիրտ: Այս ամենը լավ խառնում են ու քսում վարակված տեղերը:

2. Յերկրորդ դեղը պատրաստվում է այս ձևով. վերցնում են 2 շիշ ձյութ, 2 շիշ պղնձե արջառպի լուծվածք (մի բոռն արջասպը, կապույտ քարը, պիտի լուծել մեկ շիշ ջրի մեջ) և դրան ավելացնում են մեկ բաժակ կրեոլին: Այդ ամենը խառնում են և տաքացնում մինչև յեռ գալը: Հետո թողնում են սառչի: Յերբ դեղի տաքութիւնը հասնում է նոր կթած կաթի տաքութեանը, այն ժամանակ դրան ավելացնում են մեկ շիշ ջուր ու կարգին խառնում և հետո դրանով քսում են վարակված տեղերը:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՔՍԵԼ ԴԵՂԸ

Վորպեսզի մշլամները ոգուտ տան, նրանք պիտի մտնեն կաշվի խորքերը, վոր լավացնեն կենդանուն: Վորովհետև քոսատիգերը պահված են լինում կաշվի տակը, հարկավոր է առաջուց կակղացնել կաշին և հեռացնել նրա վրայից թեփերը, խոցերը և մազերը, իսկ բաշի, ճակատի և պոչի մազերը պիտի խուզել:

Դրա համար բժշկելուց առաջ վարակված տեղերը քսում են կանաչ սապոն կամ ձեթ, վորին կարելի չե ավելացնել սև կարբուկա (բաժակին մեկ գդալ): Մի որ հետո քսված սապոնը կամ ձեթը լվանում են տաք մոխրաջրով և սապոնով, սպա կաշվի յերեսը լավ սրբում ու չորացնում են: Դրանից հետո քսում են մշլամը ծղնոտով, կամ խոտով, խսիքով (ճիւղով), բայց ավելի լավ է քսել շոտկով (խոզանակով): Թունդ վարակված դեպքում հարկա-

վոր չի մի անգամից քսել ամբողջ կաշին, այլ միայն կեսը: Յերկրորդ մասը քսում են 2-3 որ հետո: Ձիու սրբած տեղերը նորից են քսում: Միայն լավ կերակրված և ջահել ձիերի ամբողջ մարմինը կարելի չե միանգամից քսել առանց վախենալու, վոր կսատկեն:

Միլամ քսելու ժամանակ պետք է զգույշ լինել, վորովհետև քոսի գեղերի մեծ մասը թունավոր է: Բացի այդ, ամբողջ մարմինը քսելիս կարող են փակվել կաշվի անցքերը, վորով չի կղաղարի կաշվի շնչառությունը: Իսկ սրանից կարող է և մահ առաջ գալ: 6 կամ 7 որ հետո ձին լավ լվանում են չոտկերով և տաք ժութը ջրով: Յեթե գեղը քսելուց հետո ձին կշարունակի քորել իր մարմինը, այդ դեպքում հարկավոր է քսել յերկրորդ անգամ: **ՀԻՎԱՆԴ ՁԻԵՐԻՆ ՊԵՏՔ Ե ԶՈԿ ՊԱՀԵԼ ՈՒ ԼԱՎ ԿԵՐԱԿՐԵԼ:**

Քոսու ձիերը կարող են վարակել ուրիշ ձիերի և տան տավարը, ուստի հարկավոր է նրանց այնպիսի տեղ պահել, վոր նրանք առողջ կենդանիների հետ չմիտվում չունենան:

Գյուղական գործկոմները պետք է խիստ հետևեն, վոր հիվանդ կենդանիները պահվեն առանձին, վորչ մի դեպքում ընդհանուր արտատեղի չուղարկվեն և չջրվեն այն տեղերում, վորտեղ ջրվում են առողջ ձիերն ու կովերը:

Առողջանալուց հետո հարկավոր է ախտահանել այն բոլոր շինությունները, վորտեղ նրանք բժշկվել են: Ամենից լավն է, այդ շինությունները յախտակացնել կրով և 3-4 շաբաթ քամուն տալ: Գամաղբը հարկավոր է առանձին տեղ հավաքել և թույլ չտալ, վոր տավարը տրորի առնվազն 3-4 շաբաթվա ընթացքում: Կաշվի լծասարքը պետք է քսել ձյութով, իսկ քրտնաշորերը հարկավոր է կամ վոշնչացնել, կամ մոխրաջրի մեջ յեռացնել: Վստահ լինելու համար, վոր տնտեսության մեջ

կամ գլուզում քոսը բոլորովին վերջացել է, անհրաժեշտ է, վոր անասնաբուժական կազմը ժամանակ առ ժամանակ շրջի և նայի նախիրները, նույնիսկ այն ժամանակ, յերբ թվում է, թե բոլոր հիվանդներն արդեն առողջացել են:

Պետք է հիշել, վոր տիգերն անասունի մարմնից դուրս՝ կարող են գեռ 5—6 շաբաթ ապրել, և հեշտությամբ մի անասունից մյուսին անցնել:

3. Տ Ա Վ Ա Ր Ի Ք Ո Ս Ը

Խոշոր յեղջուրավոր անասունների՝ կովի, գոմեշի և յեզան վրա պատահում են քոսի նույն տեսակները, ինչ վոր ձիերի վրա: Սակայն պետք է ասել, վոր այդ անասունները ավելի քիչ են վարակվում քոսով, քան ձիերը: Տավարի քոսը հեշտ է բժշկվում, վորովհետև նրանց մեջ պատահում են ամենից շատ քոսի թեթև տեսակները:

Քոսը տավարի վրա սկսում է զարգանալ գլխից և վզից. վարակումն անցնում է ուրիշ անասուններից՝ ձիուց, շներից, վոչխարից և խոզից: (տես. նկ. 6)

Քոսն սկսվում է ճակատի մազից, վզից, յեղջուրների (պոզերի) արմատներից և պոչի արմատից: Քոսը կարող է լինել շատ ծանր, վորից հյուծվելով անասունը կարող է սատկել:

Կաշվակեր քոսը տավարի մեջ հեշտությամբ է բժշկվում:

Սրա սիրած տեղերն են պոչի արմատի փոսիկները և փոքրի խողը:

Զնայած, վոր տավարի քոսն ընդհանրապես բժշկվում է արագ և լավ, բայց և այնպես, բժշկելիս պետք է վորոշ նախազգուշություն պահպանել. սրինակ, ամեն մի անգամ դեղ քսելիս պետք է ամբողջ մարմնի քառորդ մասը քսել, վորովհետև խոշոր յեղջուրավոր անասունները շատ գգոյուն կաշի ունեն, և շուտ կարող են փառ-

վել: Դեղը քորելուց առաջ հորկալոր ե կաշին փափկացնել ձիու կաշվի պես:

Ջրալի զեղերն ավելի լավ են, քան պինդ զեղերը: Մեղիկից և մկնղեղից պատրաստած մշկամեքենան.



Նկ. 6. կովի քոսի վիպ

պետք են և վնասակար տավարի համար: Տավարը դրանցից կարող ե թունավորվել:

Տավարի քոսը բռնկելու համար պոքոժ են ածում հետեյալ զեղերը.

1. Կրեոլինի կամ լիզոլի լուծվածքներ, 5 տոկոսանի, այսինքն 100 մաս ջրին 5 մաս դեղ:

2. Մեկ մաս սպիտակ նավթ խառնել 3 մաս ձեթի հետ կամ ջրի հետ ու քսել:

Քսված գեղերը յերեք օրից հետո լվանում են տաք ջրով և սապոնով:

Երնոթյուններն ու առարկաները, վորոնց քսվել է վարակված տավարը, նույնպես օրտահանվում են, ինչպես ձիերի բոսի ժամանակ:

4. ՄԱՆՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔՈՍԸ

ա) ՎՈՉԽԱՐԻ ՔՈՍԸ

Վոչխարների վրա ամենից շատ պատահում է քոսի վերնակաշվային տեսակը: Քորատիզային քոսը հազվագյուտ է լինում, իսկ կաշվակերը պատահում է իբրև բացառություն:

Վոչխարների վրա ֆորաիզոպիկոսն սկսվում է սովորաբար պոռոններից, քերանի ակկյուններից յեւ իրի ծակերի մոտից, ուստի և այս քոսը սովորաբար անվանում են դիսի ֆոս:

Անխնամ քոշնված դեպքերում, վորակվել կարող է ամբողջ մարմինը, վորից յեւ անասունը կսասկի:

Քոսի այս տեսակը, պետք է ասել, այնքան վտանգավոր չէ, վորքան ձիու քորատեղային քոսը և հեշտությամբ է բժշկվում:

Վոչխարների սովորական վերնակաշվային քոսը հեշտությամբ չի ճանաչվում, վորովհետև հիվանդի մարմինը դեռ սկզբում քոս չի գալիս:

Վարակված վոչխարների մեջ ամենից առաջ կարելի չէ նկատել, վոր բոլի վրա գտնվում են մազերի փոքր փնջեր, վորոնք կպած են մնացած մազերի վերին շերտին: Բուրդը թափվում է: Յեթե սկսենք այդպիսի կասկածելի տեղերի կծիչն դիտել, նրա վրա կտեսնենք փոփրկյալ բծեր, յերբեմն քոշորովիկ սպիտակ՝ ծածկված հեղուկով, վորոնք չորանալուց հետո դառնում են բարակ, գեղին խոցեր: (տես նկ. 7)

Յեթե վաքակված ե լին: մ մաքմնիմեծ մասը, այն
 ժամանակ հիվանդներն ակտում են նիհարել և ստակում են,
 առանձնապես թուլերը: Աշնանը և ձմեռը, յերբ վոչխար-
 ները զոմեքում են պանվում, քոսը շատ փրագ ե տարած-
 վում: Դուրսը, արոտաանդիներում պանելիս հիվանդու-
 թյունը պակասում ե և յերբեմն ել բոլորովին վերանում:


Վոչխարների մեջ կաշվակեր քոսը հայտնի յե վարպես
 «վոսնի ֆու»: Սա պակաս վաքակիր ե և հեշտ ե բժշկվում:



Նկ. 7. ֆուս վոչխար

Ընդհանրապես վոչխարի քոսը շատ լավ ե
 այն միջոցներով, ինչ միջոցներով ձիուն
 այն ել ցուրտ ժամանակ և յերբ վոչխարները քիչ են:

Յերբ կարի ե լինում բժշկել մեծ թիվ
 նրանց սովորաբար չեն քսում զեղը, այլ



լողացնելով ավազանների վաննաների միջոցով:

Այդպես անում են միայն սոստոր, փորովհետեւ ցուրտ ժամանակ վոչխարները կարող են մրսել:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԼՈՂԱՑՆՈՒՄ ՎՈՉԽԱՐՆԵՐԻՆ

Վաննաներով բժշկելու ժամանակ պարտադիր են հետեյալ կանոնները.

1) Ամենից շուտ և շողացնել քուրդը հուղեղուց յեւ կաշվի բոլոր խոցերն ու վերքերը բժշկելուց 8-14 օր հետո:

2) Զուրը պէտք է յինի գոյ: Ավազանի ջրի համար յերմության ամենալավ աստիճանն է 30° Ռեոմյուրի:

3) Ամեն մի խուզած վոչխարի համար պետք է իրցնել փոշ պակաս մեկ քառորդ վեղրու (դույլ) ջուր (100 լիտրի համար մոտավորապէս 20-25 դույլ):

4) Պետք է լողացնել բոլոր վոչխարներին, յեթե յնիսկ նրանց մի մասը արտաքուստ բոլորովին առողջ չէ:

5) Վաննան կ'կնւմ են 5-8 օր հետո. լավ կ'լինի 2 անգամ վաննա դրվի:

Վաննան պատրաստում են հետեյալ ձևով. վերցնում էսա պոտաշ (կալաքար), 1 մաս կիր և 20 մաս

90 վոչխարի համար պետք է պատրաստել 20-25 ծվածք: Վոչխարներին 1 կամ 2 րոպե պահում են այդ մեջ, վերից հետո նրանց մաքրում են խով կամ ծղնոտով:

Վերքերի կեղևները կակղացնելու ու հեռացնել հարկավոր է քսել կրեոլինից ու կանաչ

ստաված դեղ, (1 մաս կրեոլին և 8 մաս կանաչ ստավոն, 4 օր շարունակ):

Օրը մեկ անգամ, 3-4 ան շատ ետան և լավ միջոցներ: Վաննայի համար հետեյալ դեղը, փորը մեր կողմից Մենք առաջարկում ենք:

առանձնապես փորձված եւ և տվելէ շատ լավ արդյունք. հարկավոր եւ գոյ ջրի մեջ պատրաստել յերկուս և կես տոկոսանի կրեոլինի լուծվածք: Կրեոլինը կարելի յե փոխարինել լեզլիով, միայն հարկավոր եւ սրանից պատրաստել մեկ ու կես տոկոսանի լուծվածք:

Յեթե հիշյալ միջ ցները ձեռքի տակ չկան, այդ դեպքում կարելի յե գործածել յեփված ծխախոտի ջուր (1 մաս ծխախոտի տ'րե 12 մաս ջրի հետ): Մեկ վոչխարին 2 շիշ բավական եւ:

Վոչխարին վերցնում են 2 մարդ՝ մեկը բռնում եւ առաջի և հետեի վոտքերից, մյուսը՝ գլխից և փակում եւ աչքերն ու ականջները, վորպեսզի հեղուկը չլցվի նրանց մեջ, ինչպես նաև բերանի և քթի մեջ:

Վոչխարին շուռ են տալիս մեջքի վրա և պահում են վանայի մեջ 3 րոպ, մինչև վոր բուրդը բոլորովին կթրջվի: Վանայից հետո վոչխարին փոխադրում են դատարկ ունկանի մեջ, վորտեղ խնամքով սրբում, ցամաքեցնում են, ապա խոզանակներով տրորում:

Այն շինությունները, վորտեղ գտնվել են հիվանդ վոչխարները, պիտի խնամքով ախտահանել: Այն արտատեղերը, վորտեղ արածում են վոչխարի հիվանդ հոտերը, առողջներին չպետք ե տանել:

բ) Ա Յ Ծ Ի Ք Ո Ս Ը

Այծերի մեջ պատահում ե միայն քորտաղի քոսը, վորն սկզբում յերեւում ե պուշների, քթի և ականջների վրա: Յերբ քոսն ուժեղանում ե, վարակված տեղերում կաշին պատում ե ծալքերով և ծածկվում ե կապտամոխրագույն պինդ կեղևով: Մեխնամ թողնված դեպքում այծերը հաճախ սատկում են հյուժվելուց: Այծի փստով շատ շուտ վարակվում են մարդիկ:

Այծերը վանային չեն դնում, դրա համար ել դեղ են քսում նրանց:

Լավ են ագնում ձյութից, կրեոլինից և կարբոլից պատրաստված մեղմները: Կարելի չե պատրաստել քսելու դեղ 20 մաս ձյութից և նույնքան կանաչ սապոնից, սքրանց խառնում են իրար ու քսում: Բացի այդ պատրաստում են և այսպես. մեկ մաս կրեազոտ կամ ձյութ, մի մաս կրեոլին և 5 մաս խոզի յուղ, լավ խառնում են ու քսում:

գ) Խ Ո Ջ Ի Ք Ո Ս Ը

Ինչպես այծերի, նույնպես և խոզերի վրա պատահում է միայն քորատիզի բուր: Ամենից առաջ նա հայտնվում է նրանց աչքերի փոսերում, յերեսների և ալանջների վրա, ազդրների ներքևի մասի վրա: Անխնամ թողնված դեպքում ամբողջ վարակված մալմինը ծածկվում է կեղևով ու խոցերով: (տես նկ. 8.)

Բժշկելուց առաջ անհրաժեշտ է խոցերը կակղացնել ձեթով (մեկ մաս կարբոլ և 10 մաս ձեթ): Մեկ որ հետո ձեթը լվանում են տաք ջրով-սապոնով:


Լավ են ներգործում խոզերի քոսի դեմ նույն մեղմները, փորոնք հիշված են այծերի համար:

դ) ՇՆԵՐԻ ՅԵՎ ԿՍՏՈՒՆԵՐԻ ՔՈՍԸ

Շների վրա բուր շատ հաճախ է պատահում: Յուրաքանչյուր շնաուր պետք է լավ իմանա, փոր շուր հաճախ վարակում է բոլոր տնային անասուններին ու մարդուն: Շների մեջ պատահում է միմիայն քորատիզի բուր: Ամենից առաջ նա հայտնվում է գլխի ու փորի վրա յեղ պոչի արևաշի մոտ ու այնտեղներից արագ տարածվում է մարմնի մյուս մասերը: Վարակված տեղերը շատ խիստ քոր են գալիս, մազերը թափվում են և կաշվի կեղևը պոկվում է:

Խիստ վարակման դեպքում լավ են ներգործում ձյութից պատրաստված հեղուկ մեղմները, ծծմբի հետ կամ առանց նրան: Առանձնապես կարելի չե առաջարկել հետև-

յալ մհլամը, վրը բաղկացած է մեկ մաս ճյուղից, 1
մաս ճճմբից, 2 մաս կանաչ սապոնից և 2 մաս չմաք-
րած սպիրտից: Այս մհլամը պետք է քսել որակաւ մեկ
անգամ 3 օր շարունակ, ապա լվանալ կրեոլինի և կանաչ



Նկ. 8. Բայոս խոզ

սապոնի 2 տոկոս առք ջրի լուծվածքով:

Կատուների մեջ քոսն սկսվում է գլխավորապես գլխի
և ալանջների վրա, վարակված տեղերը խիստ քոր են
գալիս:

Կառուներից վարակվում են մարդիկ, ձիերը և խո-
շոր յեղջուրավոր անասունները, և քանի վոր կատվի
քոսը շատ դժվարությամբ է բժշկվում, ավելի նպատա-
կահարմար է քոսոտ կառուներին վռնչացնել:

յե) ԹԻՉՈՒՆՆԵՐԻ ՔՈՍԸ

Թռչունների քոսը շատ հաճախ է պատահում և
լինում է յիբկու տեսակ — ֆուսիզային յեղ կաշվակա:

Քորատիզային քոսը ամենից շատ պատահում է հա-
վերի և աղամիսների մեջ և վարակում է գլխավորապես
վոտքերը, վորոնք կարծես թե կաշվով կամ կրով լինեն
ծնված: Յերբ վոտքի մատների խողերը ծածկվում են
կեղևով, Թռչունները չեն կարողանում վոտքի վրա կանգ-
նել: Վարակված տեղերը քոր են գալիս և հիվանդները
քոր յեկած տեղերը կտցահարում են: Վերջիվերջո քոսով
վարակված Թռչունները մաշվում ու սատկում են: (տես. նկ. 9)




Նկ. 9. հավի ֆուսիզային վոտք

Կաշվակեր ֆուսը վարակում է գլխավորապես վիզը և
կուրծքը, վորտեղից արդեն տարածվում է կտուցի ու
մորուքի վրա: (տես. նկ. 10)

Յեթի ժամանակին հոգ չտանվի, հիվանդները կստակեն:

Բժշկելիս նախ պետք է կաշվի կեղևը փափկացնել ճարպով կամ կանաչ սապոնով, ապա սկսել քսել կարբալյան մհլամ, (1 մաս կարբոլ և 20 մաս խոզի ճարպ): Լավ հետևանք է ստացվում պերուկիանի բալլամ քրսելիս:



Նկ. 10 ճալի կաւակիւր քոսը

Հավաքները շախախտւում են սպիտակացնելով կըրաշրով: Թառի փայտերը կամ այրում են, կամ կուպրով ծածկում, քսում: Հատակի վերին շերտը պետք է քերել ու դուրս թափել և նրա տեղը լցնել մոտ 2 վերջոկ հաստութեամբ վառարանի մոխիր:


5 ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՔՈՍԸ ԲԺՇԿԵԼՈՒ ՀԱՍԱՐԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Անաստաբույժ Վեյեմեյի փորձառութունից)

1) Կես ֆունտ սովորական աղ պետք է լուծել կեսգոյլ ջրի մեջ: Լուծվածքը քսել անասնի մարմնին ամեն որ և քսելուց հետո մի քանի ժամ անասնին արևի տակ կանգնացնել: Այս միջոցը կարելի չէ գործադրել միայն ամառը և այդ ձևով միայն յերկար ժամանակվա ընթացքում կարելի չէ բժշկել:

2) Սուլեմայի լուծվածքով (մեկ մսխալ սուլեմա և 1 մսխալ սովորական աղը խառնում են իրար և լուծում 4 շիշ ջրի մեջ, անպայման կապե կամ աղակյա ամանի մեջ): Այդ լուծվածքը որոշմեջ բուժում են անասնի կաշվին: Այս միջոցը գործադրվում է միմիայն՝ ձիերի համար: Այս միջոցը նույնպես ունի վորոշ անհարժարություն, վորովհետև պետք է քսել 5—7 անգամ, քացի դրանից բողբի ձեռքերն այս լուծվածքից այրվում են և սեանում:

3) Քոսի բժշկության ամենահասարակ և գործածելիք միջոցը թույլ տեսնելի կենդանիների համար հեշտվայել է: Լավ բուժում են մեկ քառորդ ֆունտ ծծմբից և կես ֆունտ ձեթից պատրաստած մշլամ (սկզբում ծծմբի վրա մի քիչ ձեթ են ածում և խմորի նման հանցում, ապա ավելացնում են մնացած ձեթը): Այդ խառնուրդին ավելացնում են մեկ շիշ սև նավթ ու խառնում: Մի մարդ բռնում է ձեռքին պատրաստված մշլամը և անընդհատ խառնում է փայտով, վորպեսզի ծծումբը չնստի տակը, իսկ մյուսը չոթկով (խողանակով) կամ փայտով քսում է անասունի կաշվին: Ամբողջ կաշին քսում են մի անգամ և թողնում են 6 օր, վորից հետո լվանում են քաղցրահամ Սովորաբար քուր վոչնչանում է և անգամ քսելուց հետո: Քիչ է անտանում, վոր կարելի է քսել քիչ քան անգամ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0835567